ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/320 «21» 10 2025 թ.

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Մնացականյանին
(ՀՎՀՀ 01063649)
Հասցե՝ Ք.Երևան, Ավան, Մ. Բաբաջանյան փ. 39/313 շենք
Էլ. հասցե՝ anush-mnacakanyan@mail.ru
Հեռ.՝ +37493959150

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05 փետրվարի 2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2025/Հ–15–1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 19-րդ չափաբաժնի, ինչպես նաև 04 մարտի 2025 թվականի կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը պարտավոր էր մատակարարել 10000 զույգ ուսադիր-վրադիր (այսուհետ՝ Ապրանք), սակայն, որից Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարվել 6700 զույգը:

24 սեպտեմբերի 2025 թվականին թիվ 15/12/260095-25 գրությամբ Ընկերությունը ծանուցվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների խախտման վերաբերյալ:

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս մասնակի չի մատակարարվել Ապրանքը և չի կատարվել Պայմանագրային պարտավորությունները, խախտվել է Պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ–2025/Հ–15–1 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 9 539 (ինը հազար հինգ հարյուր երեսունինը) ՀՀ դրամը և սահմանված տույժը յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 2-րդ խմբաքանակի չմատակարարված Ապրանքների մասով՝ 91 աշխատանքային օրերի նկատմամբ և 3-րդ խմբաքանակի մասով՝ 27 աշխատանքային օրերի նկատմամբ, որի հանրագումարը կազմում է 9 463 (ինը հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 191 724 /հարյուր իննսունմեկ հազար/ ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 190 780 /հարյուր իննսուն հազար յոթ հարյուր ութսուն/ ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 01 » 10 2025թ.

ք.Երևան

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռախոս՝ 010 59 60 21